— Ցանուն Բարսեղ էֆ. Իսթանպոլլուեան Կ. Պոլսեցւոյ, որով տուաւ տեղեկութիւն զստացմանէ յղեալ 10 օսմ. լիրայից։ Թ. 478.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն երեսփոխի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Երեւան քաղաքի Դիմիտրիի Պապովեան։ Թ. 370.

— Ցանուն դանձապետի Մ. Աթոռոյ, որ ի ս. Աստուածածին եկեղեցւոջ Նուխի քաղաքի, Գրիգորի Գեանջու

Վարդապարեանի ամուսնալուծութեան գործը և հրամայեց՝ նախ—լուծել յիշեալ ամուսնութիւնը Սառայի անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տալ Շաքարին նորէն ամուսնանալու։ Բայց որովհետև նա առաջին կնոջ կենդանութեան ժամանակ՝ թէև նրա անբարոյական կեանքն ու կենցաղից յետոյ ամուսնացել է և պսակուել Ծաղկունք գիւղացի Նատալիա Ղազարեանի հետ Դաւիթ աբեղայ Բիւլբիւլեանցի ձեռամբ, ուստի Դաւիթ աբեղային օրինաւոր պատասխանատուութեան ենթարկելու խնդիրը կարճել նրա մահուան պատճառով, իսկ Շաքար Ցակովբեանին ենթարկել վեցամսեայ ապաշխարութեան Սևանի վանքում և ապա միայն նրա ամուսնութիւնը ճանաչել օրինաւոր։

Մայիսի 2-ին Սինոդը լսեց Շուշի քաղաքի բնակիչ Բաբաջան բէկ Աբրահամբէկեանի բողոքը Կոնսիստորիայի անդամ Գարեգին քահանայ Յովհաննիսեանի դէմ և կատարուած քննութիւնը, արդար ճանաչեց Գարեգին քահանային Բաբաջան բէկի բարդած մեղադրանքներից և հրամայեց Ղարաբաղի Կոնսիստորիային յայտնել այս մասին երկու կողմերին ևս։

Նոյն թուին Սինոդը լուծեց Թելաւ քաղաքի Նիկոլայ Տէր Սահակեանի և Ամալիայ Գերլախի ամուսնութիւնը՝ վերջնիս անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուաւ Տէր Սահակեան Նիկալային նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Տփխիսի գաւառի Դաղէթ գիւղի բնակիչ Գէորգ Մնացականեան Միսեանցին և դիմեց Տփխիսի Նահանգապետին հարկաւոր հաճութեան համար նոյն գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու։

Մայիսի 4-ին Սինոդը լուծեց Նիժ գիւղի բնակչուհի Աննա Տէր Ղուկասեանի ամուսնութիւնը Աբրահամ Տէր Ղուկասեանի հետ՝ վերջնիս ցմահ տաժանակիր աշխատանքի դատապարտուելու պատճառով և իրաւունք տուաւ Աննային նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Թեմիրխան-Շուրա քաղաքի բնակիչ Հեղինէ Խանաղեանի և Ղազարոս Խանաղեանի ամուսնութիւնը ամուսնական անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուաւ Հեղինէին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Աղէքսանդրապոլի գաւառի Բօղաղքեասան գիւղի բնակչուհի Նազիկ Մկրտչեանի ամուսնութիւնը անդարձ աքսորուած Կնեազ Մանկասարեանի հետ և իրաւունք տուաւ Նազիկին նորէն ամուսնանալու։

Մայիսի 13-ին Սինոդը լսեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի յայտարարութիւնը Կուկիոյ ս. Աստուածածնայ եկեղեցւոյ երեսփոխան Աբրահամեանցին մարմնաւոր դատարանի չը յանձնելու մասին և աւելորդ համարելով Կոնսիստորիայի պատճառաբանութիւնները, հրամայեց անյապաղ կատարել Սինոդի հրամանը և Եսայի Աբրահամեանցին յանձնել մարմնաւոր դատարանի։

Նոյն թուին Սինոդը լուծեց Աղէքսանդրապոլի գաւառի Ղափանլի գիւղի բնակիչ Յարութիւն Բայբուրթցեանի պսակը Եաթար Յովհաննիսեանի հետ Յարութիւնի ամուսնական կեանքին ընդունակ չը լինելու պատճառով և իրաւունք տուաւ Եաթարին նորէն ամուսնանալու, կանխապէս ենթարկելով նրան եռամսեայ եկեղեցական ապաշխարանաց՝ ամուսնալուծութիւնից առաջ ուրիշի հետ կենակցելու պատճառով։

Նոյն թուին Սինոդը կրկին մերժեց Երնջակի վանահօր Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի խնդիրը Յովհաննէս Ադամեանին նոյն վանքի միաբան ընդունելու մասին։

Մայիսի 16-ին Սինոդը լուծեց Կարսի շրջանի Փոքր Փարկիթ գիւղի բնակիչ Կարապետ Ենգոյեանի և Հայկանուշ մահտեսի Պողոսեանի պսակը՝ վերջնիս անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուաւ Կարապետին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Հոռաթաղ գիւղի բնակիչ Գրիգոր Գասպարեանցին և ձեռնադրել քահանայ յիշեալ գիւղի վրայ։

Մայիսի 18-ին Սինոդը լուծեց Տփխիսի վերաբնակիչ Ստեփաննոս Մահտեսի Միրզայեանի և Ոսկինար Մարգարեանի ամուսնութիւնը մարդու անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուաւ Ոսկինարին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լսեց Նորին Սրբութեան № 414 կոնդակը մայիսի 12-ից և որոշեց խնդրել Նորին կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայից միամեայ անցագիր Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանի համար արտասահման գնալու իւր առողջութիւնը վերականգնելու նպատակաւ։

Մայիսի 20-ին Սինոդը մերժեց Ներսէս քահանայ Ղամազեանի խնդիրը կուսակրօն դառնալու մասին ի նկատի ունենալով նրա հասակը և որոշեց այս մասին խոնարհաբար յայտնել Նորին Վեհափառութեան։

Մայիսի 23-ին Սինոդը լուծեց Նիկողայոս Գեօքչայեանի և Աննա Մելիք Աղամալեանի պսակը համաձայն Վեհափառ Հայրապետի կոնդակի և իրաւունք տուաւ երկու ամուսիններին ևս նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան շարքն ընդունել Տիգրան Տէր Յովակիմեան Մելիք Հայկազեանին Սարուշէն գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու համար։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան շարքն ընդունել Սարգիս Միքայէլեան Յովակիմեանցին և նշանակել սպասաւոր Աղէքսանդրապոլի ս. Աստուածածնայ եկեղեցու։

Նոյն թուին Սինոդը որոշեց Ռափայել քահանայ Ռուբինեանցին ճանաչել մշտական քահանայ Երևանի ս. Յովհաննէս եկեղեցւոյ, որի մասին և հրամայեց տեղեկագրել Երևանի Կոնսիստորիային։

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՆԲՈՎԱՆԴԱԿԵԼԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՏԱՃԱՐԸ

(Բարութեան սերմերից).

Զանազան երկրներում բարեպաշտ մարդկանց ձեռքով յանուն Աբարչի և աշխարհի Տիրոջ կառուցուած են բազմաթիւ և բազմազան տաճարներ։ Նրանցից մի քանիսը շլացնում են իրանց ահագին մեծութեամբ՝ նրանց մէջ կարող են տեղաւորուիլ տասն հազարաւոր աղօթաւորներ. միւսները յափշտակում են իրանց արտաքին բարեձևութեանց նրբութեամբ և փայլով. ուղղաձիգ աշտարակները, ժապաւէնի նման բարակ զարդարանքները, թեթև գոյնզգոյն սիւնեակները երկար ժամանակ բևեռում են իրանց վրայ անցորդների ուշադրութիւնը. երրորդները իրանց ներքին տեսքով աղօթողների վրայ շնչում են ջերմեռանդ խոհեր. զարթեցնում են նրանց մէջ կրօնական զգացմունք, տաճարի դէպի երկինք վերացող կամարները հեռացնում են աղօթողի միտքը երկրից և տանում մի ուրիշ, բարձր, երկնային աշխարհ։ Շինողների ջանասիրութիւնը, նրանց բարեպաշտութիւնն ու ճարտարապետական տաղանդը նպաստել են կոշտ քարից ստեղծելու հարիւրաւոր ճշմարիտ հռչակաւոր շինութիւններ, որոնք արժանի են մարդկանց համար աղօթատներ լինելու։ Բայց որչափ էլ բարեբաւի, զարգանայ շինարարական գործը, որքան էլ նոր